մեա Վար(դ)ան . . » (պաsկ. 191)։ Արձանագրութեամբ մի քար էլ տեղաւորուած է հարաւային դարբասին մօտ՝ պարսպի մէջ, որ, անշուշտ, վանքի շինութեան վերայ էր՝ բովանդակութիւնից դատելով. «մեք Սարգիս (և) Ցովէս. միաբան/եցաք ի սբ. Աշաձնիս և ետու/... ս. եկեղեցոյս վդս. Սա/.... զծառ. զարդարին պատ/..../»։ Բարեբաղդաբար, հնարաւորութիւն ունինք որոշելու արձանագրութեան մօտաւոր ժամանակը, որ ԺԴ. դարի առաջին քառորդն է,

Պաsկեր 191.

սրանց աշակերտի գրած Լամբրոնացու պատարագի մեկնութեան յիշատակարանով, որի մասին խօսք կը լինի քիչ յետոյ։

Թուականով մի քանի խաչարձաններ են մնացած գերեզմանատանը, որ վանքի հիւսիս–արեւմտեան կողմն է, մի բլրի վերայ. դոցանից հնագոյնը 1292 թուից է. «Ես Ցակոբ մեղաւոր / քահ. կանգնեցի զխաչս ի / .... / (յ)աղաւթս.. (յիշեցէք?) / թվ. ՉԽԵ» (= 1296)։ Մի ուրիշ հասարակ խաչքարի վերայ փորագրուած է միայն «ի թվ. ՉԾԱ.» (= 1302)։ Արևելահիւսիսային կողմը բլրի վերայ պատուանդանով մի խաչքար կայ, որի ճակատի արձանագրութիւնը չի կարդացուում, բայց թեւերի մօտ փորագրուած է թուականը՝ «ՉԾԷ» (= 1308)։

Այսպիսով տեսնում ենք, որ վանքի շինութեան հետ կապուած արձանագրական տեղեկութիւնները ԺԴ. դարի վերջին տասնամեակներից այն կողմը չեն անցնում, բայց և այնպէս նորա գոյութեան մասին ունինք աւելի հնագոյն ապացոյցներ՝ 1215 թուի խաչարձանից զատ և ձեռագրական յիշատակարան 1276 թուականից, այստեղ է գրուած Լամբրոնացու Պատարագի մի մեկնութիւն, «որոյ յառաջաբանի մեկնութիւն է ի Լամբրոնացւոյն՝ բաղդատութեամբ երից օրինակաց»(*)։ ԺԴ. դարից յաճախում են մեր ձեռագրական յիշատակարանները. 1333 թուին Մարկոս կրօնաւորը գրել է տալիս «ի վանքս Կուքւոյ ի տան մեծի սրբարանիս և Աշաբնակ տաճարիս Աշածնիս և սբ. և ահեղ հզօր նշանիս Հազարաբուրաց» Լամբրոնացու Պատարագի մեկնութիւնը։ Յիշատակարանը թուագրուած է ի մինչի այլոց, Պռոշեանց Վասակ իշխանի անունով. «և ի յիշխանութե. նահանգիս մերոյ թոռին Պռոշա զոր (sl) ի յազգէն Վարդանանց Վասակա», «և յառաջնորդութե. ուխտիս մերոյ տր. Սարկաւագին»(**)։ Մենք բացատրել ենք, որ այս Վասակը Էաչիի որդին էր, Ամիր–Հասան Բ.ի եղբայրը(***)։ Յիշատակարանի հեղինակի ուսուցիչներն են եղել Սարգիս և Ցովհաննէս, որոնց արձանագրութիւնը տեսանք հաստատուած պարսպի պատի մէջ։ ԺԴ. դարի կէսերին մօտաւորապէս յիշատակւում է Դանիէլ գրիչ Կուքեցին, որ արտագրել է Մարգարէ վարդապետ Ոծոպեցու համար Ցովհաննէս Քռնեցու թարգմանած «Գիրք Դժոխոց»ը, վերջում աւելացնելով հետևեալ փոքրիկ յիշատակա-



Պաsկեր 192.

բանը. «Զ Դանիէլ Կուքեցի գծող տեարիս քարոզի յաղօթս յիշեցէք»(****)։ Մարգարէ վարդապետը Քռնեցու հետևողներից էր, Եսայի Նչեցու ապստամբ աշակերտներից. գուցէ նոյն շրջանին էր պատկանում և Դանիէլ Կուքեցին։

(*) Սմբատեան, Երնջակ, 140։
(**) Ալիշան, Սիսական, 487։
(***) Մեր Խաղբակեանք, 202։
(****) Ձեռ. էջմ. № 370 նժ։